https://doi.org/10.46991/hc.2025.22.1.089

The Erzurum Branch of Teşkilat-ı Mahsusa

Vera Sahakyan
https://orcid.org/0000-0002-2623-9541
Mashtots Institute of Ancient Manuscripts, Department of Oriental Studies,
Researcher, PhD Student
verasahakyan@matenadaran.am

Keywords: World War I, the Caucasus Front, Behaeddin Şakir, Special Organization, 1914-1918.

During the First World War, the Russian-Turkish border, also known as the Caucasian Front or Eastern Front, extended from the Black Sea to the northern regions of Iran. The defense of this front was assigned to the Ottoman Third Army, led by Mahmud Kâmil Pasha. The Ottoman Empire had a strategic interest in the Caucasus region, aiming to maintain influence in the area if Russian power were to be established there. Additionally, they sought to utilize an Independent North Caucasus as a buffer in case of changes in the geopolitical situation.

To further these goals, between August and October of 1914, regiments supporting the Ottoman army were dislocated along the Russian-Turkish border. These regiments were coordinated by the Istanbul center of the Teşkilat-ı Mahsusa organization. Three headquarters were established in strategic locations: Erzurum, Van, and Trabzon.

This strategic planning and organization were indicative of the Ottoman Empire's efforts to assert control over the Caucasus region and to prepare for potential conflicts and shifts in power dynamics during the First World War.

Such strategic planning testifies to the Ottoman Empire's efforts to establish control over the Caucasian region and to prepare for potential conflicts and shifts in power dynamics during the First World War.

Within the framework of the article, we aimed to explore recent publications concerning the organization known as Teşkilat-I Mahsusa, which has gained significant traction. We sought to shed light on the activities of the Erzurum branch, focusing on key details from the memoirs of Arif Cemil (Denker) and Ebulhindili Cafer Bey.

Թեշքիլաթ-ը մախսուսա կազմակերպության Էրզրումի մասնաճյուղը

History and Culture Vol.-22(1), 2025, pp. 89-102

Received: 14.06.2025
Revised: 13.08.2025
Accepted: 13.09.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

The Erzurum Branch of Teşkilat-ı Mahsusa

Թեշքիլաթ-ը մախսուսա կազմակերպության Էրզրումի մասնաճյուղը

Վերա Սահակյան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ,
Արևելագիտության բաժնի գիտաշխատող, ասպիրանտ

Հիմնաբառեր՝ Առաջին համաշխարհային պատերազմ, Կովկասյան ռազմաճակատ, Բեհաէդդին Շաքիր, Հատուկ կազմակերպություն, 1914-1918:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ռուս-թուրքական [Կովկասյան ռազմաճակատ կամ Արևելյան ճակատ] սահմանը ձգվում էր Սև ծովից մինչև Իրանի հյուսիս: Կովկասյան ճակատի պաշտպանությունը դրված էր Օսմանյան III բանակի վրա, որի հրամանատարն էր Մահմուդ Քյամիլ փաշան: Կովկասի նկատմամբ Օսմանյան կայսրությունն ուներ երկարաժամկետ միջոցի համար մշակված ռազմավարություն. ռուսական իշխանության հնարավոր հաստատման պարագայում պահպանել ազդեցությունն այստեղ, իսկ աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխման դեպքում անկախ Հյուսիսային Կովկասն օգտագործել իբրև պատնեշ: Այս նպատակին ընդառաջ՝ 1914 թ. օգոստոսից մինչև հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում ռուս-թուրքական սահմանի երկայնքով ձևավորվում են Օսմանյան բանակին օժանդակող գնդեր, որոնք համակարգվում էին Թեշքիլաթ-ը մախսուսա կազմակերպության Ստամբուլի կենտրոնի կողմից: Կազմավորվում է երեք շտաբ՝ Էրզրումում, Վանում ու Տրապիզոնում:

Հոդվածի շրջանակում փորձել ենք քննել Թուրքիայում մեծ թափ ստացած Թեշքիլաթ-ը մախսուսա անունով կազմակերպության վերաբերյալ նոր հրատարակությունները և դրանց լույսի ներքո անդրադառնալ Էրզրումի մասնաճյուղի գործունեությանը՝ անկյունաքարային մանրամասներ ներկայացնելով Արիֆ Ջեմիլի ու [Դենքեր] Էբուլհինդլի Ջաֆեր բեյի հուշերից:

Эрзурумский филиал Тешкилат-и Махсуса

Вера Саакян

Научно-исследовательский институт древних рукописей имени Месропа Маштоца, научный сотрудник отдела Востоковедения, аспирант

Ключевые слова: Первая мировая война, Кавказский фронт, Бехаеддин Шакир, Особая организация, 1914-1918 гг.

Во время Первой мировой войны российско-турецкая граница, также известная как Кавказский фронт или Восточный фронт, простиралась от Черного моря до северных регионов Ирана. Оборона этого фронта была поручена Османской Третьей армии под командованием

Махмуда Камиля Паши. Османская империя имела стратегический интерес к Кавказскому региону, стремясь поддерживать влияние в этой области, если российская власть установится там. Кроме того, они стремились использовать Независимый Северный Кавказ в качестве барьера в случае изменения геополитической ситуации.

Для достижения этих целей между августом и октябрем 1914 года были сформированы полки, поддерживающие Османскую армию, вдоль российско-турецкой границы. Их координировал стамбульский центр организации Тешкилат-и Махсуса. В стратегически важных местах - Эрзуруме, Ване и Трабзоне - были открыты три штаба.

Подобное стратегическое планирование свидетельствует об усилиях Османской империи установить контроль над Кавказским регионом и подготовиться к потенциальным конфликтам и изменениям в динамике власти во время Первой мировой войны.

В рамках статьи нами была сделана попытка исследовать недавние публикации, касающиеся организации, известной как Тешкилат-и Махсуса, которая приобрела значительное влияние. Мы стремились пролить свет на деятельность Эрзурумского отделения, опираясь на ключевые детали из мемуаров Арифа Джемиля (Денкера) и Эбулхиндили Джафер бея.

* * *

Ներածություն: 1990-ական թվականներից սկսած նոր զարգացումները նկատի առնելով՝ Թուրքիայի Հանրապետությունը ձգտում էր ամրապնդել իր դիրքերը տարածաշրջանում, վերահսկողություն սահմանել Խորհրդային միության թյուրքալեզու ժողովուրդների նկատմամբ: Այս համատեքստում օրակարգային են դառնում քիչ ուսումնասիրված գաղտնի կառույցների, հետախուզական կազմակերպությունների ու լրտեսական այլևայլ ցանցերի վերաբերյալ ուսումնասիրությունները: Վերանայվում են այդ ոլորտների վերաբերյալ հրապարակումների մեթոդաբանությունը, և մշակվում են բոլորովին նոր ռազմավարական մոտեցումներ ու ձևաչափեր: Մասնավորաբար մեծ թափ է ստանում *Թեշքիլաթ-ը մահսուսա* կազմակերպության նկատմամբ հետաքրքրությունը, որի մեկնակետը կազմակերպության վերաբերյալ առաջին ատենախոսության [Stoddart, Michigan, 1963] թուրքերեն թարգմանությունն ու հրատարակումն էր [Demirel, 1993]: Տասը տարի անց արդեն՝ 2000-ական թվականներին, թեմայի նկատմամբ մեկ այլ հետաքրքրության ալիք է բարձրանում, որն արդեն պայմանավորված էր Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին սպասվելիք գիտական ու քաղաքական հակադարձումների թուրքական նախապատրաստությունների հետ, քանի որ կազմակերպությունը մեծ դեր է ունեցել Հայոց ցեղասպանության իրագործման մեջ: Այս զարգացումների համատեքստում Թուրքիայում մեծ աշխատանքներ տարվեցին հատկապես արխիվային փաստաթղթերի վերամշակման ուղղությամբ, որոնցից ընտրողաբար վերցված նյութերի հիմա վրա թուրքական կողմը մեկը մյուսի ետևից հրատարակության էր հանձնում *Թեշքիլաթ-ը մահսուսա* կազմակերպության ամենատարբեր ասպեկտներին նվիրված ուսումնասիրություններ: Այս նոր հրատարակությունների մեջ ցեղասպանության մասին կամ ընդհանրապես անդրադարձ չկա, կամ այն որակվում է որպես «***որոշ գիտնականների կոշտ և ոչ տեղին մոտեցում, որն աստիճանաբար ձևափոխվում է»*** [Safi, 2012, 10]: Այս հոդվածի շրջանակում մենք նպատակ ունենք նախ հայ ընթերցողին հակիրճ ծանոթացնելու թեմայի վերաբերյալ 1990-ական թվականներից հետո հրատարակություններին ու հեղինակների մոտեցումներին, ապա՝ անդրադառնալ Էրզրումի

շտաբի կազմավորման մանրամասներին, նպատակներին, ղեկավարման հանգամանքներին ու ծրագրերին:

Թեշքիլաթ-ը մախսուսա **կազմակերպության վերաբերյալ նոր հրատարակությունների առանձնահատկությունները**

Ներկայումս *Թեշքիլաթ-ը մախսուսա* կազմակերպության և առհասարակ Օսմանյան շրջանի լրտեսական [casus] կազմակերպությունների, ինչպես նաև ներկայիս Թուրքիայի Ազգային անվտանգության ծառայության աշխատանքների ու զարգացումների մասին գրող ամենաակտիվ հետազոտողներից է Փոլաթ Սաֆին: Թեման նրա ուշադրության կենտրոնում էր ուսանողական տարիներից: Անդրադարձել է բակալավրում, մագիստրատուրայում [Safi, 2006], ասպիրանտուրայում [Safi, 2012], ակտիվորեն հանդես է եկել հոդվածներով ու զեկուցումներով: Նրա վերջին հետազոտությունը, որի շուրջ 530 էջերում ամփոփված են «Ազգային հետախուզական կազմակերպությունների» մասին իր դիտարկումները, հրատարակվեց 2023 թ. [Safi, 2023]:

Ահմեթ Թեթիկի՝ ԹՄ վերաբերյալ առաջին հրապարակումները վերաբերում են 2014 թ. [Tetik, 2014]: 2021 թ. նա լույս ընծայեց նույն շարքի երրորդ հատորի գիրք առաջինը՝ ընդգրկելով միայն 1918 թվականը [Tetik, 2021][1]: 2023-ին Ահմեթ Թեթիկը Ֆերուդուն Աթայի հետ միասին հրատարակության պատրաստեց ԹՄ հայտնի հրամանատարներից Հուսամեդդին Էրթյուրքի [Hüsameddin Ertürk] հուշերը [Tetik, Ata, 2023], որում հատկապես ընդգծված է թեշքիլաթի էության, գաղափարի, նպատակների ու գործունեության շարունակականությունն Ազգային շարժման տարիներին: Այլ հեղինակներից են Մեհմեդ Բիլգինը [Bilgin, 2017], Զեյնել Լեվընթը [2019], Չաղդաշ Յուքսելը [2020] և ուրիշներ:

Վերը նշված հեղինակներն ունեն մեկ ընդհանուր թեզ. նրանք չեն անդրադառնում Հայոց ցեղասպանությանը, հետևաբար չեն անդրադառնում նրանում ԹՄ ունեցած դերի քննությանը: Ոմանք էլ բավարարվում են՝ թեմայի վերաբերյալ հրապարակումներին [Dadrian, 2004] հղում անելով [Bilgin, 2017, 430, Safi, 2012, 10]:

Հոդվածի շրջանակում գործածված աղբյուրներից են Էբուլհինդլի Զաֆեր [Էրչրքան] բեյի* ու Արիֆ Զեմիլի հուշերը: Ա. Զեմիլի հուշերը մեզ է հասել երեք ճանապարհով: 1933 թ. նա իր հուշերը հրատարակեց «Վաքիթ» թերթում: Այս հրապարակումներին հետևել է Փարիզի «Յառաջ» թերթն ու 1933-1934 թթ. համարներում թարգմանաբար վերահրատարակել հոդվածաշարը հայերեն: 1997 թ. Զեմիլի հուշերը լույս են տեսել թուրքերեն առանձին գրքով:

---

[1] 2014-2018 թթ. ընթացքում առաջին հատորը վերահրատարակվեց չորս անգամ: Սա մի կողմից խոսում է թեմայի նկատմամբ մեծ հետաքրքրության մասին, մյուս կողմից նպաստում է նրանում արծարծված գաղափարների մեծ տարածմանը, ինչն արվում է հատկապես գրքի չափազանց մատչելիության, հետևաբար հասանելիության շնորհիվ:

* Ծնվել է 1884 թ. Էրզրումում՝ Էբուլհինդլի (Ալայբեյ) գյուղում: Եղել է ակտիվ իթթիհադական: Այս ուղղությամբ հատկապես աշխատել է Էրզրումում: Հուշերը գրել է լատինատառ: Ընտանիքի անդամները հետագայում հուշերը հանձնել են Ալի Բիրինջիին: Ա. Բիրինջին այդ հուշերը հանձնել է Իբրահիմ Էթհեմ Աթնուրին: Վերջինս սկսել է ուսումնասիրել հուշագրությունը և հրատարակել հոդվածներ [Atnur, 2012, 250-51]:

Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանության մեջ ԹՄ Էրզրումի մասնաճյուղի ունեցած մասնակցության հարցին, այդ մասին մանրամասնություններ կարելի է քաղել դատավարության նյութերից և դրանց շրջանակում հավաքագրված պաշտոնական վավերագրերից [Գ.Կ.Վ., 1965], որոնք ցույց են տալիս Օսմանյան կառավարության կողմից ծրագրված գործողությունների ամբողջականությունը:

Օսմանյան կայսրության մասնակցությունը Առաջին համաշխարհային պատերազմին:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ռուս-թուրքական [Կովկասյան ռազմաճակատ կամ Արևելյան ճակատ] սահմանը ձգվում էր Սև ծովից մինչև Իրանի հյուսիս: Կովկասյան ճակատի պաշտպանությունը դրված էր Օսմանյան III բանակի վրա: Հրամանատարն էր Մահմուդ Քյամիլ փաշան, իսկ շտաբի պետն էր խիզախ ու տաղանդավոր Ֆելիքս Գուզեն [Felix Guze, 1914-1918], որի շնորհիվ բանակը համալրվել էր 34 հազար զինվորով [Sanders, 1927, 106]: Կովկասի նկատմամբ Օսմանյան կայսրությունն ուներ երկարաժամկետ միջոցի համար մշակված ռազմավարություն՝ ռուսական իշխանության հնարավոր հաստատման պարագայում պահպանել ազդեցությունն այստեղ, իսկ աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխման դեպքում՝ Անկախ Հյուսիսային Կովկասն օգտագործել իբրև պատնեշ [Ավագյան, 2011, 34]: Այս նպատակին ընդառաջ՝ 1914 թ. օգոստոսից մինչև հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում, ռուս-թուրքական սահմանի երկայնքով ձևավորվում է ԹՄ երեք շտաբ՝ Էրզրումում, Վանում ու Տրապիզոնում: Այս հանգամանքը նկատի առնելով՝ ոմանք այն կարծիքն են առաջ քաշում, որ ԹՄ-ն իր գործունեությունն սկսել է Կովկասից, միայն հետագայում՝ ընդլայնվել: Սակայն այստեղ կան մի քանի նրբություններ, եթե խոսքը վերաբերում է այն ԹՄ-ին, որը 1915 թ. անվանափոխվել է ու ստացել «Ումուր-ը շարքիյյէ դաիրեսի» անունը, հետևաբար, այո՛, կարող ենք ասել, թե այն իր գործունեությունն սկսել է Կովկասից: Սակայն, եթե խոսքը վերաբերում է թուրք-իտալական ու Բալկանյան պատերազմների ընթացքում ձևավորված կառույցին, այդ դեպքում նման ձևակերպումը ճիշտ չէ: Բացի դրանից՝ այս երկու կառույցները ունեցել են տարածաշրջանային, ուղղորդման ու ղեկավարման, ադմինիստատիվ համակարգերի, ինչպես նաև անձնակազմի [Levent, 2019, 185], նպատակների, գործողությունների իրականացման մեթոդների ահռելի տարբերություններ: Մյուս կողմից, թեպետև այս երեք շտաբները ներկայացված են որպես «Կովկասյան առաքելություն» [Kafkas Misyonu], խորքի մեջ տարանջատված են երեք առանձին ծրագրեր, որոնք միավորվում են վերջնական նպատակի համատեքստում: Եթե Վանի կենտրոնի նպատակը Իրանական Ատրպատականի նահանգը պանթյուրքական գաղափարախոսության համաձայն կայսրության մաս դարձնելն էր, Տրապիզոնի կենտրոնի նպատակը Կովկասի նկատմամբ վերահսկողության սահմանումն էր, ապա Էրզրումի կենտրոնի նպատակը իր կազմավորման հենց առաջին օրերից հայկական յոթ նահանգներում ու առհասարակ կայսրության մյուս շրջաններում ապրող հայության ամբողջական հայաթափումն էր: Ուստի այն անդրադարձները, թե հայերի տեղահանությունը ծրագրվել է Սարիղամիշի պարտությունից հետո, ըստ էության, սխալ կարծիքներ են, որովհետև Էրզրումում տեղի ունեցող խմորումները, դեռևս Համիդին գահընկեց անելու օրերից [Atnur, 2014, 695], խիստ որոշիչ ու անկյունաքարային են այս իրադարձությունների քննության ծիրից ներս:

Էրզրումում տեղի ունեցող գործընթացներն ու նրա ունեցած նշանակությունը քննելու առումով կարևոր սկզբնաղբյուրներից են Էրզրումի գավառի Էբուլիհինդի [Alaybeyi] գյուղի բնակիչ

Էրուլհինդլի [Erçıkan] Ջաֆեր բեյի [1884-1958] հուշերը [Atnur, 2014, 695]: Դրանք լույս են սփռում հայ-թուրքական հարաբերությունների, գաղտնի ու առերևույթ ծրագրերի, ձգտումների ու նպատակների վրա: Ջաֆեր բեյը գրում է, թե Սահմանադրության բերած ուրախությունը հայ ու թուրք ժողովուրդների միջև սկսում էր արագ մարել, քանի որ այդ տոնակատարությունների շրջանակում կազմակերպվել էր այցելություն ինչ-որ հայ ֆիդայու գերեզմանին [Atnur, 2014, 695]: Այս դեպքը Ջաֆեր բեյը բնութագրում էր իբրև թուրք ժողովրդին հասցված մեծ վիրավորանք, որը հետագայում ունենալու էր իր հետևանքները: 1913 թ.՝ ամռան վերջին, Ջաֆերը Բալկաններից վերադարձավ Էրզրում և գլխավորեց հակադաշնակցական գործողությունների կազմակերպումը [Atnur, 2014, 697]: Նախ հավաքեց դաշնակ գործիչների մասին տեղեկություններ՝ զուգահեռաբար զինելով Էրզրումի թուրք գյուղացիությանը [Atnur, 2014, 697]:

Այս հուշագրությունն ընթերցելիս ապշեցնող է ՄԱ կուսակցության կառավարման համակարգի, մշակած ծրագրերի ու գործողությունների սիրողական, տհաս, չկշռադատած, արկածախնդիր վարքագիծը: Ջաֆերը անասունների վաճառքով զբաղվող մարդ էր, բայց սուլթան Ռեշադի պատվիրակության կազմում մասնակցել էր Բալկանյան պաշտոնական այցելություններին: Նա Էնվերի, Ջեմալի, ֆինանսների նախարար Ջավիթի, Հյուսեին Թոսունի, Օմեր Նաջիի Էրզրումյան գործընկերն էր, տեղեկություններ հավաքողն ու բնակչությանը զենք բաժանողը: Ըստ էության, մենք տեսնում ենք Դաշնակցության գործողությունների թիրախավորում, ուռճացում ու հակահայկական տրամադրություն բորբոքող մի սաղմի ձևավորում:

Բնակչությանը զինելուց բացի՝ Ջաֆերը հավաքեց մոտավորապես 56 մարդ, նրանց բաժանեց 5-ական խմբերի և հատուկ հանձնարարականով ուղարկեց գյուղեր: Էրզրումում ձևավորված այս առաջին խմբի մեջ էին ընդգրկված առաջին դատապարտյալները [Atnur, 2014, 698]: Հետևաբար ինչպե՞ս կարող է քննարկվել Սարիղամիշի պարտությունը որպես շրջադարձային հայերի ցեղասպանության համատեքստում: Ահավասիկ հայերի թիրախավորումը սկսվեց 1908 թվականից, ուժեղացավ 1913 թ., երբ սկսեցին մեծ թափ առնել քարոզչական գրքույկների հրատարակումները [Safi, 2023, 85-6], որոնք ակտիվ հակահայկական քարոզչությամբ ուղեկցվում էին զանգվածային սպանություններով [Atnur, 2014, 700]:

Ջաֆեր բեյի հուշերին հենվելով՝ ընդգծենք հետևյալ երեք առանցքային կետերը.

I) **ԹՄ զինված ջոկատներ ձևավորվել են Էրզրումում՝ 1913 թ., որը բացառապես ուղղված էր հայության դեմ:**

II) **Այն գործում էր կառավարության իմացությամբ:**

III) **Էրզրումի կենտրոնի կողմից ընդունված որոշման համաձայն՝ խմբում են ընդգրկվել մայոր Դադաշ Բեքիրը, քայմաքամ Ռուշթուն, մայոր Ռաքըփն ու Իսմայիլ բեյը** [Atnur, 2014, 699]:

Նկատենք, որ 1913 թ. դրությամբ կազմակերպությունն արդեն իսկ գաղտնի չէր, ապօրինի չէր և համագործակցում էր բարձրաստիճան սպայական կազմի հետ: Ջաֆերը Էրզրումում իրականացնում էր մի աշխատանք, որի նպատակը ռազմականացված հասարակության ստեղծումն էր: Անշուշտ, դա նրան հաջողվեց: Արդյունքը Էրզրումի արյունահեղ կոտորածներն էին, որոնց մասին Ֆ. Ռըֆքը Աթայը կանդրադառնար իբրև երկու կուսակցությունների

անհեռատես գործողությունների արդյունք, որի գլխավոր պատճառը, սակայն, հայաթափման ուղղությամբ երիտթուրքերի վարած քաղաքականությունն էր։

Թուրք-գերմանական պայմանագրի կնքումից և զորակոչի հայտարարությունից հետո Թալեաթը շտապեց Էրզրում ուղարկել իր մարդկանց։ Նրանց հանձնարարվեց երկու գործ՝ աշխատանքներ տանել սահմանի երկու կողմում գտնվող մուսուլման բնակչության հետ, խափանել [Cemil, 1997, 46-47] «Դաշնակցություն» ու «Հնչակյան» կուսակցության ցանկացած համագործակցություն Ռուսաստանի հետ [Özel, 2020, 84-85]։ Եթե նախկինում Ջաֆեր բեյը աշխատում էր միայն հայերի ուղղությամբ՝ թիրախավորելով նրանց, ներկայումս ավելացել էր նաև ռուսական վտանգը։ Այս պայմաններում 1914 թ. օգոստոսին անհրաժեշտություն էր առաջանում հստակորեն տարանջատելու ներքին ու արտաքին թշնամիների հանդեպ մշակվելիք պլանները։ 1914 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին արդեն ձևավորվեցին ***Հարիջի [արտաքին]*** և ***Դահիլի [ներքին]*** թեշքիլաթները։ Հարիջի [արտաքին] թեշիլաթի մաս էին կազմում Վանի, Բիթլիսի ու Դողուբայազեթում տեղակայված կենտրոններով թեշքիլաթները։ Սրանք դրվում էին Իդրիս բեյի վերահսկողության ներքո [Atnur, 2014, 700]։ Ինչ վերաբերում էր ***Դահիլի*** [ներքին] թեշքիլաթին, այն սկզբում կազմվում էր 40 մարդուց և դրվում Սամարղանդցի Հաջը Աքըֆ Աղայի վերահսկողության ներքո։ Ներքին թեշքիլաթի կենտրոնը սկզբում Էրզրումում էր, հետագայում այն տեղափոխվեց Հաղ[տ]իկ գյուղ, իսկ պատերազմի ընթացքում՝ Դողուբայազեթ [Atnur, 2014, 703]։ Հետևաբար նկատենք, որ կար համագործակցություն, որովհետև երկու կենտրոնն էլ Դողուբայազեթում էին։ Ավելին, Ջաֆերի հուշագրությունից հստակ հասկացվում էր, որ Էրզրումում, այնուամենայնիվ, թե՛ Դահիլի և թե՛ Հարիջի թեշքիլաթներն ունեին մեկ ընդհանուր ղեկավար՝ Բեհաէդդին Շաքիր [Atnur, 2014, 688-700], որը դեռևս 1906 թ. ձևավորված ընդհատակյա ռազմական կառույցների հայտնի կազմակերպչին էր [Özel, 2020, 88]։ Շաքիրը արագ էր կողմնորոշվել ցանցը զարգացնելու հարցում, վայելում էր Թալեաթի հովանավորությունն ու Նազըմի օժանդակությունը։ ԹՄ գլխավոր շտաբը գտնվում էր Չորուհի հովտից Դողուբայազեթի միջնամասում, որը նախքան պատերազմի մեջ մտնելը տեղափոխվել էր Նարման [Atnur, 2014, 703]։

1914 թ. հոկտեմբերի 2-ով թվագրված հեռագրերից արդեն հստակ հասկացվում էր, որ Շաքիրի հեղինակությունը շատ բարձր էր։ Քարա Քեմալի հետ ունեցած քննարկումների արդյունքում, որին, Շաքիրից բացի, մասնակցում էին ՄԱ կուսակցության տեսուչ [müfettiş] Ֆիլիպեցի Հիլմին, Յուսուֆ Ռըզան և ուրիշներ, սեղանին էր դրվում ԹՄ գործունեության կանոնակարգ [Nizamname], որի համաձայն՝ Կովկասյան առաքելությունն իր գործունեությունն այսուհետ իրականացնելու էր Կովկասի հեղափոխական կոմիտե [Kafkasya İhtilal Cemiyeti] անվան ներքո, իսկ Արևելյան ճակատի պաշտպանության համար ձևավորվելու էին երկու կենտրոն՝ Էրզրում ու Տրապիզոն [Մ. Ալի, «Յառաջ», 1933 թ., դեկ. 7 [22]]։ Երկու կենտրոններն էլ իրավասություն ունեին ուղիղ կապվելու Պոլսի կենտրոնի հետ, սակայն Կովկասի հեղափոխական կոմիտեի կենտրոնը լինելու էր բացառապես Տրապիզոնը [Մ. Ալի, «Յառաջ», 1933 թ., դեկտեմբեր 7 [22]]։ Այս առիթով առկա է հակասականություն։ Վ. Քելեշյըլմազը, հղելով օսմանյան վավերագրերին, նշում էր, թե նախ ձևավորվել էր Տրապիզոնի կենտրոնը, հետագայում՝ նոր միայն Էրզրումի ու Վանի կենտրոնները։ Բայց ավելացնում էր, թե Էրզրումը գլխավոր կենտրոնն էր, իսկ Տրապիզոնն ու Վանը՝ ենթամասնաճյուղեր [**Keleşyılmaz, 2000,** s. 284-286]։ Ամենայն հավանականությամբ Կովկասի հեղափոխական կոմիտեի ձևավորման հանգամանքը

համաձայնեցված չէր Պոլսի հետ: Ինչ-որ տեղ կարելի է ասել, որ սա Քարա Քեմալի ինքնագործունեության արդյունքն էր, որն այդպես էլ վերջնական ձևակերպում չստացավ: Հետազոտությունը ցույց է տալիս, որ Քարա Քեմալը իրավասու չէր նման հանձնարարականներ տալու, անվանափոխելու կամ ուղղորդելու թեշքիլաթը: Կարծես ինչպես Էնվերն ու Թալեաթն էին ստեղծել իրենց թեշքիլաթները, նմանապես Քյուչուք էֆենդին* իր հերթին էր ձեռնարկել մի նոր թեշքիլաթի ստեղծում: Սակայն այն հաջողություն չունեցավ:

ԹՄ տնօրենության հաստատումից հետո՝ 1914 թ. հոկտեմբերին, Կովկասյան առաքելության շրջանակում Էրզրումի [Կարին] կենտրոնն ի պաշտոնե դրվում էր Շաքիրի ղեկավարման ներքո, իսկ Ֆիլիպեցի Հիլմին ու Կարինի կուսակալ Թահսին բեյը և Ֆուաթ Սաբիթը նշանակվեցին Շաքիրի օգնականներ [Մ. Ալի, «Յառաջ», Դեկ. 7, 1933 թ., [22]]: Հետագայում Շաքիրին անձամբ իրեն օգնական նշանակեց Նիազի բեյին: Այդ նշանակումից քիչ չանցած՝ Շաքիրը Պոլիս ուղարկած հեռագրով պահանջում էր ծանուցել, թե մինչ այդ պահը որտե՞ղ են կազմավորվել թեշքիլաթներ, ո՞ր տարածքներում, ովքե՞ր, ե՞րբ և ո՞ր շրջան են ուղարկվել, ի՞նչ հրահանգավորումներ են ստացել, ի՞նչ փորձառություն ունեն ու ի՞նչ հաջողություններ են գրանցել [Bilgin, 2017, 125]: Բացի այդ՝ Շաքիրը Թալեաթին ուղարկեց մի զեկույց, որի համաձայն՝ այն շրջանները, որոնք դրված էին III բանակի վերահսկողության ներքո բաժանվում էին չորս թևի: Այս զեկույցից հասկացվում էր, որ խոսքը վերաբերում էր միայն Կովկասյան առաքելության Էրզրումի ու Վանի շտաբների վերահսկողության ենթակա շրջաններին՝ ի բաց առնելով Տրապիզոնի շտաբի գործառույթները:

Առաջին կենտրոնի կամ *Մոլ քանաթի* մեջ էին ընդգրկված Յուսուֆելին ու Նեմերվանը [Նարման]: Այն դրված էր Գալաթացի Խալիլ Բեյի ու Էրզրումի ժանդարմերիայի սպա Նուսրեթ Բեյի հրամանատարության ներքո: Նարման-Գյուվենքյոյ, Չիլհորոզ [Շենքայա-Բարդըզ], Ուռուտ [Օլթի-Չայուսթու], Փիթգիր [Օլթի-Այյըլդըզ գյուղ], Մելո [Արտվին-Զեյթինլիկ-Սարըբուդակ] շրջանները դրվում էին Խալիլ ու Նուսրեթ բեյերի հրամանատարության ներքո: Բացի այդ՝ Հաֆըզ Սաբրթ Նադիրի, Մուսթաֆա և Դուրսունի ջոկատները համալրվեցին նոր չեթեներով [Bilgin, 2017, 141]:

Երկրորդ կենտրոնը կամ *Օրթա քանաթ* [Orta Kanat]: Ընդգրկում էր Խորասան-Քարաուրգան-Քյոթեք հատվածը: Այս թևը դրված էր Ֆիլիպեցի Հիլմիի, ժանդարմերիայի կապիտան Էմին բեյի հրամանատարության ներքո: Էրզրումից հավաքագրված չեթեները բաժանված էին Իսլամաձոր, Հատիկ, Հոշենք [?] [ներկայիս Խորասանի Դյոներթաշ գյուղն է] գյուղերի վրա: Էյյուփ փաշան, Քոռ Մուսթաֆան, Համիթի բեյը, Իդրիս բեյը ջոկատներ էին կազմել իսլամձորցիներից, իսկ Լեզքինեօղլուն ջոկատ էր կազմել էրզրումցիներից [Bilgin, 2017, 141]: Էրզրումի թեշքիլաթը սահմանամերձ բնակավայրերում իրականացված աշխատանքներն ավարտելուց հետո տեղափոխվեց սահմանային Հատիկ [Bulgurlu] գյուղ [Bilgin, 2017, 143]:

* Բյույուք (մեծ) էֆենդին Թալեաթն էր, իսկ Քյուչուք (փոքր) էֆենդին՝ Քարա Քեմալը:

Երրորդ կենտրոն։ Կովկասյան առաքելության երրորդ կենտրոնն ընդգրկում էր Աղրը [Քարաքիլիսե-Քարաքյոսե-Դողուբայազեթ շրջանը]։ Այն դրված էր բժիշկ Ֆուաթ Սաբիթ բեյի և ժանդարմերիայի կապիտան Նուրի բեյի հրամանատարության ներքո։

Դողուբայազեթը գտնվում էր ամենածայրում։ Այստեղ թեշքիլաթականներին մեծ աջակցություն էին ցուցաբերում ջելալի ցեղի աշիրեթապետերը։ Այստեղ էր կենտրոնացվում թեշքիլաթի ամենամեծ ջոկատներից մեկը, քանի որ այստեղ էր Իգդիրը՝ իր խիտ հայկական բնակչությամբ [Bilgin, 2017, 143]։ Դողուբայազեթի կենտրոնը կարևոր էր մի շարք առումներով, մասնավորաբար դեպի Թիֆլիս ու Դաղստան տանող ճանապարհներով [Bilgin, 2017, 143-144]։

Չորրորդ կենտրոն։ Շաքիրի զեկույցում առանձնացված չորրորդ կենտրոնը վերաբերում էր ԹՄ այն մասնաճյուղին, որն աշխատելու էր Իրանի ուղղությամբ։ Այսպիսով, եթե հստակեցնենք, ստացվում է, որ Էրզրումն ու Վանը միասին կազմում էին 4 կենտրոն, իսկ Տրապիզոնը առանձին կենտրոն է։

Առաջին իսկ օրերից Էրզրումում ԹՄ-ն գրանցեց մեծ հաջողություններ, որոնք ինչ-որ տեղ պայմանավորված էին Տրապիզոնի կենտրոնում առաջացած լարվածությամբ, ինչպես նաև ռուսական զորքի թույլ դիմադրությամբ։ Հիշենք, որ դեռևս 1914 թ. նոյեմբերին Յաղուբ բեյն ու ուրիշ չեթեապետեր, հեռանալով Ռըզա բեյի հրամանատարությունից, ինքնակամ միացել էին Շաքիրին։ 1914-1915 թթ. ձմռան ամիսներին, երբ ռուսները առաջ էին շարժվում Կաղզվանի ուղղությամբ, Շաքիրի չեթեներն արդեն գտնվում էին Օլթիի* ու Արդվինի* միջնամասում։ Շաքիրի ու Յաղուբ Ջեմիլի միասնական չեթեներին ոչ միայն հաջողվեց գրավել հիշյալ երկու քաղաքները, այլև Յուսուֆելին, Դավազկերտն ու Արտանուշը, իսկ դեկտեմբեր ամսին նախատեսում են Արդահանի* գրավումը [Մ. Ալի, «Յառաջ», Յուն. 31, 1934]։ Հենց Արդահանի գրավման համար էր, որ 3-րդ զորաբանակի հրամանատարությունը հեռագրեց Սթենջ բեյին թողնել Մարադիդին ու շտապել Շաքիրին օգնության*։ Այս գործողությունների մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, որ Շաքիրը ոչ միայն Էրզրումի, այլև ամբողջ Արևելյան ճակատում գործած թեշքիլաթի ղեկավարն էր։

---

* 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո միացվել էր Ռուսաստանին։

* Արդվինում էր գտնվում ռուսաց ցարի մրգաստանը։ Երբ Շաքիրի չեթեները գրավեցին Արդվինը, նրանք հիացած էին գյուղի գեղեցկությամբ։ Իսկ Շաքիրը զարմացած էր՝ տեսնելով փետուրե վերմակներ ու ձիթենիներ։ «*Չեզի պիտի թիթեղով մը ղրկեմ այս ձիթապտուղէն և քանի մը կապոց ռուսական լաւ ծխախոտ*»,– գրում էր Շաքիրը՝ Պոլսում գտնվող իր հարազատներին [Մ. Ալի, «Յառաջ», 1934 թ., հունվ. 31]։

* 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Արդահանը Կարսի մարզի հետ անցավ Ռուսաստանին։

* Արտանուշի ու Արդվինի գրավման մասին տեղեկությունները, ինչպես նաև Յաղուբ Ջեմիլի մասնակցության, գտնվելու վայրի ու մահվան հանգամանքների անդրադարձները Ա. Ջեմիլի հուշերում հակասական են ներկայացված։ Նա մերթ գրում է, թե Յաղուբ Ջեմիլը հեռացավ Տրապիզոնից՝ Շաքիրին միանալու համար, իսկ Ռըզան փոքր-ինչ թոթափեց իր անհանգստությունը, երբ տեսավ Սթենջ բեյին։ Բայց մյուս տեղում ասում է՝ Սթենջ բեյին հեռագրեցին միանալ Շաքիրին, իսկ Յաղուբը Մարադիդին հանկարծակի ռուսական հարձակումից վիրավորում ստացավ ու մեռավ։ Քիչ ավելի վերջ Մարադինին հանձնելուց հետո Արդահան մտնելիս տեղացիները նվերներով դիմավորեցին։ Նրանք մեկ ձի էին բերել հատուկ Յաղում Ջեմիլի համար [Մ. Ալի, «Յառաջ», 1934 թ. փետր. 2, 3, 4, 7 (8, 12, 20, 24)]։

Նրան էին ենթարկվում Քյոթեքի [Bilgin, 2017, 140], Տրապիզոնի կենտրոնին ենթակա Աշխաբադի գումարտակի [հրամանատար՝ Հաֆըզ Սուլեյման բեյ [Bilgin, 2017, 151]], Ռիզեի [Տրապիզոնի երկրորդ կենտրոնն էր, պատասխանատուն Տրապիզոնի պատգամավոր Նաջի բեյ], Արդվինի գունդը [Յուսուֆ Ռըզայի քրոջ որդի՝ Ջոշքունզադե Իսմայիլ աղա], Արհավիի, Բաթումի [Իսմայիլօղլու Թեվֆիք բեյ, Սաբըթ բեյ], Թիֆլիսի, Քութայիսի, Փերնեքի [Էմիր Ասլան բեյ], Օլթիի [կապիտան Մաքսուդ], Սարիղամիշի [Ալի Փեհլիվան], Գիրեսունի [Թոփալ Օսման] [Atnur, 2014, 700], Տրապիզոնի [Հաջը Ալի Հաֆըզզադե Օմեր], Բայբուրթի [Քըլդօղլու Հաջը Մեհմեթ], Դերջանի, Երզնկայի [Օսման բեյ, Դերսիմլի և ուրիշներ], Սեբաստիայի [Հալիս Թուրգութ և ուրիշներ], Խարբերդի [Հաջը Քայա, Խարբերդի բանտի վերակացուն Հասան Էֆենդի], Մալաթիայի [Մեհմեդ Էֆենդի], Քեսքին [Ռըզա], Անկարայի [Նեջաթի բեյ], Բուրսայի [Ջեմալ փաշա], Ստամբուլի [Մեհմեդջե բեյ], Կարսի [Ջիհանգիրօղլու Իբրահիմ բեյ] և այլ կենտրոնների [Atnur, 2014, 700], ինչպես նաև 1914 թ. սեպտեմբերին արդեն այս կենտրոններից զատ ձևավորված Շաքիր Նիազի բեյի [Քյոթեկի թեշքիլաթը], Նարմանում Խալիլ բեյի, Քարաքիլիսեում՝ բժիշկ Ֆուադ բեյի, որը ղեկավարում էր նաև Հնդկաստան, Աֆղանստան, Եգիպտոս, Արաբիայի ԹՄ մասնաճյուղը [Shaw, 2014, 316], ինչպես նաև Բայազետում Մեհմեդ Նեջաթի բեյի թեշքիլաթները [Մ. Ալի, «Յառաջ», 1933 թ., Դեկ. 16 [54]]:

Ըստ էության, Օսմանյան վերնախավը վստահ էր, որ հեղափոխական կոչերը մեծապես կարող էին օգնել հնարավոր պատերազմի պարագայում արագ հաղթանակ գրանցելու հարցում: Օսմանյան բանակը տեղացիների աջակցությամբ կարող էր արագ պատերազմում կարևոր հենակետեր գրավել, ապահովել պաշտպանությունն ու անցնել հակահարձակման: Այսպիսի կարծիք էր ձևավորվել նաև այն պատճառով, որ ռուսական զորքի, շարժողունակության, զենքի, զինվորների պատրաստության մասին օգոստոս ամսից տեղեկություններ էին փոխանցել Տրապիզոնի թևի ներկայացուցիչները՝ ի դեմս Ռըզա բեյի [Մ. Ալի, «Յառաջ», 1933 թ., Դեկ. 8 [26]]: Պատերազմը սկսելու ճիշտ ժամանակ էր նշում Շաքիրը [չպետք է սպասել մինչև գարուն [Մ. Ալի, «Յառաջ», 1933 թ., Դեկ. 15 [50]]: Իսկ ոմն հայազգի Արշակի, որին հավաքագրել էր Շաքիրը թուրքերի օգտին լրտեսություն անելու համար, ուղարկեցին Ռուսաստան հույժ կարևոր առաքելությամբ՝ Կովկասի երկուվերստանոց քարտեզն իրենց ապահովելու համար [Մ. Ալի, «Յառաջ», 1933 թ., Դեկ. 24, [86]], քանի որ Օսմանյան բանակը ռազմական ճշգրիտ քարտեզների առումով մեծապես զիջում էր Ռուսաստանին [Корсун, 1937, 13]: Ի՞նչ հետևություն կարող ենք անել. ոչ բավարար պատրաստվածություն, հետախուզական սխալ տվյալների ձեռքբերում ու փոխանցում, որոնց արդյունքում էլ գրանցվեց Սարիղամիշի պարտությունը, որն առաջ բերեց բոլորովին մի նոր իրավիճակ. ջախջախվեց արևելյան ճակատի պաշտպանությունը ստանձնած 3-րդ զորաբանակը, իսկ ռուսական բանակի առջև մնացին Վանի, Էրզրումի ու Տրապիզոնի՝ բանտարկյալներով, փախստականներով, ռճրագործներով համալրված գնդերն ու կենտրոնները:

Կովկասյան առաքելության ուսումնասիրությունը հստակեցնում է երեք շերտ՝ Կովկասյան առաքելության կամ հատուկ բյուրոյի հետաքրքրությունը հյուսիսարևելյան սահմանի ուղղությամբ, ռազմական նախարարության կամ հատկապես Էնվերի հետաքրքրություններն արևելքով թուրք-իսլամական համագործակցություն ապահովելու ուղղությամբ, ի վերջո՝

գերմանական կողմի հետաքրքրությունները Կովկասի ու նախապատվությունը Շաքիրի նկատմամբ:

Կովկասյան առաքելության ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ ոչ միայն ՄԱ կուսակցությունն ուներ Կենտրոնական կոմիտե, այլև Արևելյան ճակատում տեղակայված մասնաճյուղերի գործունեության համար ևս առանձնացված էր յոթհոգանոց ԿԿ, ինչպես նաև հինգհոգանոց միջնորդների [mutavassıta] խումբ: Այս առումով Թաներ Աքչամը կարծում էր, որ այս մյուս «կենտրոնական կոմիտեն» զբաղվում էր Հայկական հարցով: Աքչամը կարծում էր, որ հայերի բնաջնջման որոշումն ընդունվել է հենց այս ԿԿ կողմից, որը տեղակայված էր Էրզրումում [Akçam, 2019, 469*]:*

Առհասարակ Կովկասյան ճակատի ռազմավարական կարևորությունը թուրքերի համար չափազանց մեծ էր: 1914-1915 թթ. ձմեռ-գարուն ամիսներին սահմանում տիրող իրավիճակը կրիտիկական էր, իսկ փետրվար ամսի դրությամբ աշխատանքներ էին տարվում Կարինը դատարկելու ուղղությամբ [«Յառաջ», Մարտ 23, 1934]: Այս պայմաններում գլխավոր շտաբը սկսեց փոփոխություններ իրականացնել, որի համաձայն՝ ԹՄ-ն պետք է այլևս բանակի մաս կազմեր: Շաքիրը, որը համարվում էր ամենաազդեցիկ մարդը՝ երբեմն նախագահ, երբեմն ղեկավար հորջորջումով, պարտավոր էր վերադառնալ Պոլիս, որտեղ էլ հրաժարվելով պայքարել արտաքին թշնամիների դեմ՝ կենտրոնանալով երկրի ***ներքին թշնամիների վրա*** [իմա՛ հայերի] [Մ. Ալի, «Յառաջ», Մարտ 23, 1934,], որոնք թիրախավորվել էին դեռևս 1913 թվականից [Atnur, 2014, 691-700]:

Տեղեկություններ կան, որ Սթենջ բեյի նշանակումից մի քանի օր անց Տրապիզոնի ու շրջակայքի ԹՄ հրամանատարությունը լուծարվել է: Չնայած խոսք չկա Էրզրումի կամ Վանի ճակատների մասին, ամենայն հավանականությամբ այս ճակատների վրա ևս հաստատվեց գերմանական վերահսկողությունը՝ Տրապիզոնի միջնորդությամբ: Քանի որ այլևս Ավնի փաշան ու Սթենջն էին ղեկավարելու Կովկասյան այն ճակատը, որը նախկինում գտնվում էր Շաքիրի ու մյուսների վերահսկողության ներքո, շուտով այստեղ տեղափոխվեց նաև ԹՄ սպայակույտի ղեկավար նշանակված ազգությամբ լազ Ալի Ռըզան:

1914-1918 թթ., ըստ էության, հայ ու վրացի ժողովուրդները, ինչպես նաև Իրանի հյուսիսարևմտյան նահանգները մնացին ուժերի աշխարհաքաղաքական շահերի, սուր հակասությունների, ռազմաքաղաքական բախումների կիզակետում: Հյուսիսային ու Հարավային Կովկասները հայտնվեցին ոչ միայն Անտանտի և Կենտրոնական ուժերի, այլև հենց Կենտրոնական ուժերի երկրների շահերի բախման կիզակետում: 1917 թ. հեղափոխությունը թուրքերին ընձեռեց նոր հնարավորություն: Ոգևորված նրանք առաջ շարժվեցին՝ Կովկասն ամբողջությամբ գրավելու համար [1918]: Անդրկովկասյան թաթարները թուրքերի կողմնակիցներին էին, վրացիները վայելում էին գերմանական հովանավորությունը: Այստեղ մնացել էին միայն հայ բեկորները: Այս առիթով Լեոն գրում է, թե հայերին այս երկուսն էլ [խոսքը վրացիների ու թուրքերի մասին է] ատում էին, որովհետև նրանք ունեին ռուսական կողմնորոշում: Նախկին ցարական Ռուսաստանի տարածքում բնակվող թուրքերը բաժանվել էին երեք մասի՝ հարավայիններ, արևելյաններ ու արևմտյաններ: Օսմանյան Թուրքիան իրեն վերագրել էր թուրք-իսլամական միացյալ ազգ կերտելու առաքելությունը, որն իրագործվելու էր 2 փուլով՝ ստիպողական ու աստիճանական [Մ. Ալի, «Յառաջ», Ապրիլ 6, 1934]: Ըստ էության, նախատեսվում

էր աշխատանքներ տանել նախկին Ռուսական կայսրության տարածքի թյուրք բնակչության հետ՝ հետևյալ ուղղություններով՝

աշխատանքներ տանել կրթական հաստատությունների միջոցով,

աշխատանքներ տանել մտավորականների հետ,

օգտագործել մամուլը և այլ միջոցներ։

Թուրքերը գնահատում էին պահը և հավելում, թե այսպիսի պատմական շրջադարձ հազվադեպ է լինում. անիվը կարող է շատ արագ շրջվել։ Հնարավորին շատ պետք էր օգտվել ստեղծված իրադրությունից։

Ռուսաբնակ թուրքերին միավորելու պարտականությունը ևս հանձնարարված էր Պոլսի *Թեշքիլաթ-ը մախսուսային* [Մ. Ալի, «Յառաջ», Մայիս 7, 1934]։

Եթե ռուսական հեղափոխությունը պատեհ պատմական առիթ էր թուրքերի համար, ապա դեռևս նախորդ դարավերջին ամուր հիմքերի վրա դրված գերմանական մերձեցումը, գործեց ճիշտ հակառակ ձևով. երբ բոլշևիկները նահանջում էին Կովկասյան ճակատից, իսկ թուրքերն անարգել առաջ էին շարժվում, Կովկասի թուրքերի ու Օսմանյան թուրքերի միացման գլխավոր արգելքը հենց Գերմանիան էր։ 1918 թ. մայիսին Գերմանիան էր, որ ցանկանում էր գրավել Բաքուն՝ արգելք հանդիսանալով իթթիհաթական թուրքերի ձգտումներին [Մ. Ալի, «Յառաջ», Մայիս 7, 1934] ։

Երիտթուրքերի սկզբնական ծրագրերի համաձայն՝ Թուրքիայում ազգայնական շարժումը պետք է առաջնորդեր Կարսում տեղակայված 9-րդ բանակային կորպուսի հրամանատար Յաղուբ Շեվքեթ փաշան [Ավագյան, 2011, 32]։ ԹՄ գործունեության շրջանակում Էրզրումը դարձել էր ամենաազգայնականացված օջախը, որը ամուր հիմքեր էր ստեղծել քեմալականների հետագա առաջընթացի համար։

Ի վերջո, ո՞րն էր Գերմանիայի նպատակը։ Այս առիթով Շաքիրը Կովկասյան առաքելությունից հեռանալուց առաջ հրավիրել է ժողով, որի շրջանակում Գերմանիայի դերը գնահատում էր իբրև *Արևելքի մեջ Ռուսներին փոխարինող ուժ* [Մ. Ալի, «Յառաջ», Ապրիլ 1, 1934]։

Ամփոփելով հոդվածը նշենք, որ Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ մտավ առանց համապատասխան պատրաստվածության, Բալկաններում կրած ծանր պարտությունից առանց սթափվելու։ Մինչ Ռուսաստանը, որն ուներ ակնհայտ գերազանցություն ռազմական, տեխնիկական, ճանապարհային և այլ առումներով, զբաղված էր պաշտպանական գծերը ամրացնելու աշխատանքներով, Օսմանյան բանակը պատրաստվում էր հարձակման և այն էլ՝ միանգամից մի քանի ուղղությամբ*։ ԹՄ հավաքագրած ամենատարբեր դասակարգերի պատկանող խմբերի տրամադրած տեղեկություններով առաջնորդվող օսմանյան բանակը առաջ էր շարժվում Ռուսաստանին մեկընդմիշտ տապալելու վստահությամբ, թեպետև պատերազմի մեջ իրապես մտնելուն հրահրեց Գերմանիան, որը ցանկանում էր օգտագործել Թուրքիային՝

* Պատերազմի մեջ ներքաշվելու առնչությամբ կան տարբեր կարծիքներ։ ԹՄ թեման ուսումնասիրելով՝ մենք հակված ենք պնդելու, որ Էնվերն անձամբ էր շտապում մտնել պատերազմի մեջ, քանի որ նա ուներ սխալ տեղեկություններ իր բանակի պատրաստվածության մասին և կարծում էր, որ արագ հաղթանակով փոխելու էր պատերազմի ընթացքը։

Ռուսաստանի ուժերը թուլացնելու համար: Գերմանացիները ամբողջությամբ յուրայնացրել էին Էնվերին, հետևաբար Օսմանյան ռազմական նախարարությունը շարժվում էր այնպես, ինչպես իրենք էին ուզում: Այս ամենին ավելանում էին նաև ներքին հակասությունները՝ արագացնելով օսմանյան զինված ուժերի պարտության հավանականությունը:

Ի վերջո, Էրզրումի կենտրոնը որդեգրեց «ներքին թշնամուն» [իմա՛ հայ ժողովրդին] ոչնչացնելու և Գոլց փաշայի՝ բանակի շարժողունակությունը բարձրացնող տեսությամբ Անատոլիայի թուրքացման, թուրքերի համար հայրենիք կերտելու քաղաքականությունը, որի արդյունքում իրագործվեց Հայոց ցեղասպանությունը ԹՄ Էրզրումի, Վանի և Տրապիզոնի կենտրոնների մասնակցությամբ:

Գրականության ցանկ

Atnur, I. E, [2016], Yeşil Ordu Müfrezesi Kumandanı Ebulhindili Cafer Bey'in Sivas, Tokat ve Yozgat İsyanları Esnasmdaki Faaliyet ve Gozlemleri, Çayeli'nden Erzrum'a Yrd. Doç. Dr. Cemil Kutlu, Armağan Kitabı, Ed. Selami Kılıç, Erzrum, 2016. ss. 249-264.

Atnur, İ., E., [2014], Ebulhindili Cafer Bey'in Kaleminden Teşkilat-ı Mahsusa'nın Türkiye'nin Doğusunda Yapılanması ve I. Dünya Savaşı Günlerindeki Faaliyetleri, 691-709, Ebulhindili Cafer Bey'in Kaleminden Teşkilat-ı Mahsusa'nın Türkiye'nin Doğusunda Yapılanması ve I. Dünya Savaşı Günlerindeki Faaliyetleri, 691-709, 100. Yılında Birinci Dünya Savaşı Uluslararası Sempozyumu, 03-05 Kasım, Budapeşte/ Macaristan, ss. 691-708.

Bilgin, M., [2017], Teşkilât-ı Mahsusa'nın Kafkasya Misyonu ve Operasyonları, İstanbul, 616 էջ:

Cemil, Â, [1997], Birinci Dünyâ Savaşı'nda Teşkilât-ı Mahsusa, Birinci baskı, İst. 1997, 409 s.

Dadrian, V. N., [2004], Ermeni Soykırımında Kurumsal Roller, çev. Attila Tuygan, Istanbul, 334 էջ:

Keleşyılmaz, V., 2000, Kafkas Harekatının Perde Arkası, Osmanlı Tarihi Araştırma ve Uygulama Merkezi Dergisi OTAM, 11.11, İstanbul, ss. 277-304.

Levent Z., [2019], Teşkilat-ı Mahsusa'dan Kuva-yı Milliye'ye Gayrinizami Harp [1913-1922], Doktora tezi, Ankara, 474 s.

Levent, Z., [2019], Teşkilat-ı Mahsusa'dan Kuva-yı Mıllıye'ye Gayrınızamı Harp [1913-1922], Doktora tezi, Ankara, 474 էջ:

Özel, O., [2020], The Role of Teşkilat-ı Mahsusa [Special Organization] in the Armenian Genocide, Christin Pschichholz [ed.]. The First World War as a Caesura? Demographic Concepts, Population Policy, and Genocide in the Late Ottoman, Russian, and Habsburg Spheres [Gewaltpolitik und Menschenrechte [GM], Band 3, pp. 85-108.

Safi, P., [2006], The Ottoman Special Organization-Teşkilat-ı Mahsusa: A Historical Assessment with Particular Reference to its Operations Against British Occupied Egypt [1914-1916], a Master's Thesis.

Safi, P., [2012], The Ottoman Special Organization -Teşkilât-ı Mahsusa: An Inquiry into its Operational and Administrative Characteristics, Unpublished PhD dissertation, Bilkent Üniversitesi, Ankara, 346 p.

Safi, P., [2023], Milli İstihbarat Teşkilatı 1826-2023, İlk Defa Yayımlanan MİT Arşiv Belgeleriyle, İstanbul, 528 p.

Safi, P., [2023], Milli İstihbarat Teşkilatı 1826-2023, İlk Defa Yayımlanan MİT Arşiv Belgeleriyle, İst.

Sanders, L. v. [1927], Five Years in Turkey, Naval Institute, 327 p.

Stanford Shaw, [2014], Birinci Dünya Savaşında Osmanlı İmparatorluğu Savaşa Giriş, Ankara.

Stoddart, Ph., [1963], The Ottoman Government, and the Arabs, 1911 to 1918: A Preliminary Study of the Teskildt-i Mahsusa, Ph.D. dissertation, University of Michigan, 245 p.

Taner, A., [2019] When Was the Decision to Annihilate the Armenians Taken?, Journal of Genocide Research, 21:4, 457-480, DOI: 10.1080/14623528.2019.1630893:

Teşkilat-ı Mahsusa, Philip H. Stodard, Arba Yayınları, Çev: Tansel Demirel, 1993, İstanbul, 204 p.

Tetik, A. Ata, F., [2023], Hüsameddin Ertürk, Millî Mücadele Senelerinde Teşkilat-ı Mahsusa, Konya, 500 p.

Tetik, A., [2014], Teşkilat-ı Mahsusa [Umûr-ı Şarkiyye Dairesi] Tarihi, Cilt I, 1914–1916, İstanbul, 500 p.

Tetik, A., [2021], Teşkilat-ı Mahsusa [Umûr-ı Şarkiyye Dairesi] Tarihi, Cilt III–I: 1918, İstanbul, 463 p.

Yüksel, **Ç., [2020],** Teşkilat-ı Mahsusa ve Birinci Dünya Savaşı'ndaki Faaliyetleri, Ankara, 292 p.

Korsun, N., [1937], Sarykamyshskaya operatsiya na Kavkazskom fronte Mirovoy Voyny v 1914- 1915 Godu, Moskva, 161, [3] s., 5 otd. l. skhem., kart. ; 23kh15 sm.:

Avagyan, A., [2011], Hyusiskovkasyan k'aghak'akan vtarandiut'yuny T'urk'iayi artak'in k'aghak'akanut'yan hamatek'stum [1920-1971 t't'.], Yerevan, 344 ej.

G.K.V. [Grigor vardapet Kerkeryan], [1965], «T'eshk'ilat'i mahsuse», «Yusaber», bats'arrik t'iw, nuiruats ap¬rilean Yegherrni yisnameakin, 1915-1965, Gahire, ej 5-35:

M. Ali, «I՛nch'pes kazmakerpuyets'aw 1915-i dawadrut'iwny, T'eshk'ilat'y makhsuse, «It't'ihatakani my yushery irents' gaghtni kazmakerput'ean masin», «Yarraj», 1933-1934 t't'.